# ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան համալրվեց ՀՀ ԳԱԱ արտասահմանյան 22 նոր անդամներով

**2011 թվականի դեկտեմբերի 28-ին կայացավ ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովը, որն ընտրեց ՀՀ ԳԱԱ արտասահմանյան 22 նոր անդամներ:**
**Մեր շնորհավորանքները ՀՀ ԳԱԱ նորընտիր արտասահմանյան անդամներին:**
**Ստորև ներկայացնում ենք նրանց անունները՝ ըստ ակադեմիայի գիտական բաժանմունքների:**

### ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Գևորգ ԲԱՐԴԱԿՉՅԱՆ - գրականագիտություն- ԱՄՆ, Միչիգանի համալսարանի պրոֆեսոր

Անահիտ ՏՈՆԱՊԵՏՅԱՆ - լեզվաբանություն - Ֆրանսիա, Փարիզի արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի (INALCO) հայագիտության բաժնի վարիչ, Փարիզի լեզվաբանների միության նախագահ

Բորիս ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ - մանկավարժություն - Ռուսաստանի Դաշնություն, Ռուսաստանի կրթության ակադեմիայի պրեզիդենտի տեղակալ

Հրանտ ՊՈՂՈՍՅԱՆ - տնտեսագիտություն - Ռուսաստանի Դաշնություն, «Грант инвестрой» միավորման գլխավոր տնօրեն

Հայկ ԽԱՉԱՏՐՅԱՆ - փիլիսոփայություն - ԱՄՆ, Վիսկոնսինի համալսարանի պրոֆեսոր

### ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Միխայիլ ՊՈՂՈՍՅԱՆ - տեխնիկական գիտություններ, Ռուսաստանի Դաշնություն, թռչող ապարատների նախագծման և կառուցման մասնագետ - «Сухой» ընկերության տնօրենների խորհրդի նախագահ, «Объединенная авиастроительная корпорация» ընկերության նախագահ

Արամ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎ - մաթեմատիկա, Ռուսաստանի Դաշնություն, էքստրեմալ խնդիրների տեսություն, օպտիմալ կառավարման տեսություն, ոչ գծային անալիզ, Մոսկվայի պետական համալսարան, Ռուսաստանի ժողովուրդների բարեկամության համալսարանի պրոֆեսոր, ամբիոնի վարիչ

Ռոբերտ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - մեխանիկա - Ռուսաստանի Դաշնություն, Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի պրոֆեսոր

Վիկտոր ՓԱՄԲՈՒԿՉՅԱՆ - մաթեմատիկա, տրամաբանություն, երկրաչափության հիմունքներ - ԱՄՆ, Արիզոնայի պետական համալսարան (ASU West)

Գարեգին ՄԱՐԿԱՐՅԱՆ - ինֆորմատիկա, կապի համակարգեր, անլար լայնաշերտ կապուղիներ - Մեծ Բրիտանիա, Լանկաստերի համալսարանի պրոֆեսոր, կապի համակարգերի բաժնի վարիչ, անլար լայնաշերտ տեխնոլոգիաներում արդյունաբերական համագործակցության կենտրոնի տնօրեն

### ԱՍՏՂԱՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ՖԻԶԻԿԱՅԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Արմեն ՔՈՉԱՐՅԱՆ - կրիտիկական երևույթներ, փոխկապակցված էլեկտրոններ խտացրած և նանոմատերիաներում, գերհաղորդականություն և մագնիսականություն, հետերոկառուցվածքներ և նանոմատերիաներ, քվանտային վիճակագրական ֆիզիկա և ինֆորմացիայի տեսություն - ԱՄՆ, Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի պետական համալսարանի (CSULA) ֆիզիկայի ֆակուլտետի պրոֆեսոր, Nanomaterials&Nanoclusters Lnc ընկերության տնօրեն, գիտական խորհրդատու

Արամ ՄԻՆԱՍՅԱՆ - ազդանշանների մշակում օպտիկական եղանակներով, գերբարձր հաճախությունների ֆոտոնիկա - Ավստրալիա, Սիդնեյի համալսարանի պրոֆեսոր և Personal Chair, «Fidre-optics and Photonics» լաբորատորիայի տնօրեն

Ժորժ ԱԼԵՍՅԱՆ - աստղային ֆիզիկա - Ֆրանսիա, Փարիզի աստղադիտարան, CNRS Research Ditector

Արշակ ՊՈՂՈՍՅԱՆ - կիսահաղորդչային սարքեր, պինդմարմնային քիմիական սենսորներ և բիոսենսորներ, բիոնանոտեխնոլոգիաներ և նանոսարքեր, բիոհամակարգիչներ - Գերմանիա, կիրառական գիտությունների Աախենի համալսարան, նանո- և բիոտեխնոլոգիաների ինստիտուտի ԴՆԹ սենսորների և նանոստրուկտուրաների լաբորատորիայի վարիչ

Վիլյամ ՍԱՐՅԱՆ - ռադիոֆիզիկա, ռադիոտեխնիկա, ակուստաէլեկտրոնիկա, ինֆորմացիոն տեխնոլոգիաներ - Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվայի ֆիզիկա-տեխնիկական ինստիտուտի ռադիոտեխնիկայի և կիբեռնետիկայի ֆակուլտետի ռադիո և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր

### ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դանիել ԴԱՆԻԵԼՅԱՆ - հնէաբանություն, Ֆրանսիայի Լիլ-1 համալսարանի երկրի մասին գիտությունների դեպարտամենտի պրոֆեսոր, փիլիսոփայության դոկտոր

Վլադիմիր ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎ - քիմիական ֆիզիկա - Ռուսաստանի Դաշնություն, Ն. Ն. Սեմյոնովի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի լաբորատորիայի վարիչ (ՌԳԱ ՔՖԻ), Ի. Մ. Գուբկինի անվան նավթի և գազի ՌՊՀ ամբիոնի պրոֆեսոր, քիմիական գիտությունների դոկտոր

Հերբերտ ՔԱՄԱԼՈՎ - օրգանական քիմիա և կատալիզ - Ուկրաինայի ԳԱԱ ակադեմիկոս, Ուկրաինայի ԳԱԱ Ա. Վ. Բոգատսկու անվան ֆիզիկաքիմիական ինստիտուտի բաժնի վարիչ, քիմիական գիտությունների դոկտոր, Օդեսայի համալսարանի օրգանական քիմիայի ամբիոնի պրոֆեսոր

### ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Ալեքսանդր ՍԻՄՈՆՅԱՆ - կենսատեխնոլոգիա - ԱՄՆ, Աուբուրնի համալսարանի կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, կենսասենսորների ծրագրի գլխավոր կոորդինատոր ԱՄՆ-ի Ազգային գիտական հիմնադրամի շրջանակներում, Աուբուրնի համալսարանի պրոֆեսոր

Սերգեյ ԱՎԵՏԻՍՈՎ - ակնաբուժություն - Ռուսաստանի Դաշնություն, ՌԴ բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, ՌԴ բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, ՌԴ բժշկական գիտությունների ակադեմիայի աչքի հիվանդությունների գիտահետազոտական ինստիտուտ պետական հիմնարկության տնօրեն, «Տեսողության վերականգնման կենտրոնի» գիտական ղեկավար

Բագրատ ԱԼԵՔՅԱՆ - Ռուսաստանի Դաշնություն, սրտաբանություն, ռենտգենավիրաբուժություն բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, սրտի և անոթների հիվանդությունների հետազոտման և բուժման ռենտգենավիրաբուժական մեթոդների բաժանմունքի ղեկավար

Տիգրան ՉԱԼԻԿՅԱՆ - կենսաֆիզիկա - Կանադա, Տորոնտոյի համալսարանի դեղագործության ֆակուլտետի պրոֆեսոր: